

1



ԱՅ. ԶՈՐԵԱՆ



# ԾԱՄՈՆ

ԹԱՅՐԻ ՀԱՅԱ ԴԱՎԱՐՈՒ

891.995

9-83

ՊԵՏՀՐԱՍ

ՀՀԿՑԵՄ ԿԿ ԿԿ ՄԱՆԿԱՐԱԿԱՆ ԲՈԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1937

891.995

9-83 APR 2013

8557

2011-05

## ՇԱՄՈՆ


Մի տարի մեր շունն ու կատուն միաժամանակ  
ձագեր ելին բերել — շունը պատշգամբի տակ՝ խոտերի  
մեջ, կատուն՝ պատշգամբի վրա, անկյունում դրված արկ-  
ղում, վոր լիքն եր հին փալասներով ու բրդով։ Վերեից  
նորածին կատվիկների մլավունն եր լսվում, ներքեից  
շնիկների վկոցը, յերբ մայրերը ենուանում ելին նրան-  
ցից, կամ յերբ վերադառնում ելին թափառութիւն։

Պետք է առած, յերկուսն եւ աշխատում ելին ըստ  
բացակայել և հեռուները չկնալ. իսկ յեթե հեռանում  
ելին, փոքր անց՝ նորից վազում ելին ձագերի մոտ, մի  
անհանգիստ ու պարզ յիշկուղով, թե հանկարծ մի բան  
չպատճի նրանց, ձագերին։

Ավելի անհանգիստ եր կատուն — Շամոն. վորեե տեղ  
դնալիս — նա թավածաղ պոչը կախ — այնպիսի արագու-  
թիամբ եր գնում ու վերադառնում, վոր թվում եր աղե-  
տի ձայն և լսել: Ցեվ նա, իսկապես, իրավունք ուներ  
ալգակես լինելու, վորովհետեւ որ չեր անցնում, վոր նրան  
չանհանգատացնելին հարևան կատուները, վոր գաղտա-  
գողի կամ բացարձակ հարձակում ելին գործում՝ նրա  
ձագերը փախցնելու։ Ինչպես հայտնի լին, արու կատու-  
ները, յերբ քաղցած են, ուտում են և կատուի ձագերը  
չարձակվողները, հավանորեն, ալգապիսի կատուներ ելին.  
Նրանք գալիս ելին յերբ պատշգամբում մարդ չեր. լինում,  
զլիսավորապես գիշերները, յերբ մանավանդ լուսերը հան-  
գած ելին տեսնում. և մենք հաճախ զարթնում ելինք  
կատվածացներից կամ կատուակովից։ Թշնամու մոտեցու-  
մը տեսնելով՝ Շամոն պաշտպանվում եր — սկզբում մը ո-  
ռագին մլավոցով, վոր հետո փոխվում եր զարագիս փըն  
չոցների. նա հետզհետե ձանը բարձրացնում եր, դիպչու մ  
արկղի պատերին, կամ, արկղից դուրս գալով, հայածում



3238 - 84




թշնամուն. զող կատուն կամ կատուները նրա մոտից փախչում ելին այն ժամանակ, յերբ տան դուռը բացվում կամ վոտնաձայն ելին լսում: Յեվ Շամոն հոդնած, ուժասպառ գալիս եր ձագերի մոտ ու դողալով լիզում նրանց: Բայց Շամոն վախենում եր և շնից Ալաբաշից: Յերբ հանկարծ հանդիպում եր նրան — մեջքն ուռցնում եր ու շուրջը նայում — Ալաբաշի հարձակման դեպքում անմիջապես ծառը կամ պատ բարձրանալու: Բայց Ալաբաշը նրան նայում եր վերևից, ասես մտածում եր հարձակվի, թե չարժի ձագերին թողած ընկնել կատվի յետնից... Ու գնում եր. թե գուցե մտածում եր — Շամոն ել իր նման մալր ե, թող գնա ձագերը պահի... ինչ և ե. նա Շամոյին այժմ չեր հալածում, ինչպես առաջ, յերբ վոչ ինքը ձագեր ուներ, վոչ Շամոն:

Թերևս դրա պատճառն այն եր, վոր Ալաբաշը ձագեր բերելու որից մի տեսակ թույլ եր զգում իրեն. — շատ նիհարել եր, աշխուզժը կորցրել. յերբեմն աչքերը փակ նա յերկար պառկում եր ձագերի առաջ ու կաթ տալիս նրանց: Զագերն ուտում ելին կաթը և նվում, անվերջ նվում: Թե ինչն ելին նվում — մենք չելինք հասկանում. բայց հալրս մի որ այն կարծիքը հայտնեց, թե յերևի Ալաբաշի կաթը պակաս ե, ձագերը մնում են քաղցած. յեթե վոչ ինչու պետք ե այդպիսի ձախներ հանեն... Սկըսեցինք շանը լավ կերակրել — միս տալ, լափ տալ, վոր ձագերը քաղցած չմնան:

Բայց Ալաբաշը, վոր առաջ, ձագեր ունենալուց առաջ, պահաբար ուտում եր ամեն ինչ, — այս կերակուրներին համարյա չեր մոտենում. մի յերկու բերան կուտեր ու մի կողմ կկանգներ: — Նա պարզապես հիվանդ եր, և այնքան թախիծ ու արամություն կար նրա սե, խելոք աչքերում, վոր դժվար եր իմանալ ինչ և դրա պատճառը:

Ու մի առավոտ ել նրան տեսանք սատկած, իր ձագերի առաջ մեկնված... կիսակուլը ձագերը դնչերով խը



փում ելին նրա կըծքին ու նվում-ֆլում: Յերեքը մի-  
ասին այնպիսի տխուր ձայներ ելին հանում, կարծես  
հասկացել ելին, վոր մայրը մեռել ե, ու այլա կաթ չի  
տալու իրենց...

\* \*

Այդ նուն որը, գիշերը մեծ անհանգստություն լեղավ  
և պատշգամբի վրա—կատուների պատերազմ եր: Մի  
յենկու անդամ մենք զարթնեցինք նրանց մոլտոյներից  
ու տապալած իրերի թրխկոցից: Ու ամեն անդամ լիս  
պատկերացնում ելի, վոր Շամոն վոչ միայն պաշտպան-  
վում, այլ և քշում ե իր թշնամիներին. փնչացնելով,  
ճանկերով նրանց վրա գնալով: Շամոն մի քանի անդամ  
նույնիսկ ծղրտուն մոլտուններ արձակեց, վորոնք ինձ  
թվացին հաղթանակի նշան: Հետո ամեն ինչ խաղաղեց  
պատշգամբում: Ուրեմն Շամոն հաղթեց,— մտածեցինք:

Բայց վնասն մեծ լեղավ մեր զարմանքը, լերը առա-  
վոտը տեսանք նրա ձագերը չկան և Շամոն զզզզված  
բրդով, մի քիչ ել կեղտոտ, անհանգիստ գնում-գալիս ե  
տան առջեկի պարտիզում: Ինձ թվաց, վոր Շամոն, լերսի,  
վտանգից խուսափելու համար, ձագերը տեղափոխել ե  
ավելի ապահով տեղ, ու դրանից ել կեղտոտվել ե...

Բայց պարզվեց, վոր նա փնտում ե ձագերին:

Գիշերը ոտար կատուները տարել ելին նրա ձագերը,  
և նա խելագարի պես վազում եր գես ու գեն, ամեն կողմ.  
մի գուցե նրանց ձանը լսի և դտնի մի տեղ...

Յերբ ապարդուն վորոնումը վերջացրեց՝ Շամոն խո-  
րին հուսահատությամբ — այդ լերնում եր նրա աչքերից —  
լեկավ մեզ մոտ և տխուր մլավեց... Յեվ այնքան տրտու-  
թյուն ու թախիծ կար նրա աչքերում, վոր վոչ լեզվով  
կարելի լե պատմել, վոչ զըչով զըել: Այդ տխուր մլա-  
վոցով Շամոն կարծես հայտնում եր իր զլխին լեկած  
դժբախտությունը և, թվում եր, ոգնություն ե խնողը...



Բայց մենք ինչ կարող ելինք անել. ինչպես գտնելինք տարված ձագերը, վոր սփոփելինք խեղճ կատուին... Մեր միակ սփոփանքը կարող եր լինել այն, վոր լավ կերակրելինք և փայփայելինք նրան...

Բայց դա չնշին. մխիթարանք եր ձագերը կորցրած մոր համար: Նա մի որ, յերկու որ դարձալ գնում փընտում եր ձագերին ու մլավում, մլավում... Նրա աչքերը վոչ միայն տիրություն ելին արտահայտում, այլև թվում եր արտասվում ե մեզնից ծածուկ — այնքան աչքերը կորցրել ելին իրենց բնական տեսքը:

Այդ որփանից Շամոն մի կողմից, շան ձագերը մլուս կողմից դարձան մեզ համար հոգս, մանավանդ շնիկները, վոր այնքան անզոր ելին ու խեղճ, անոգնական ու կիսակույր, վոր մեր տկած կաթը չելին կարողանում լակել ամանից, ու նվում-մնում ելին շարունակ և վորոնում մորը, նրա ջերմությունն ու կաթը:


Մենք նրանց գլուխը բռնում, դնչները մոտեցնում ելինք կաթի ամանին: Իզուր. նրանք դողդողում ելին, բերան չելին բանում... ու մնում ելին քաղցած:

Յեվ քաղցած ու մալրական մարմնի ջերմությունից զրկված՝ մնանառում ելին աղիողորմ, տիսրությամբ լցնելով մեր՝ յերեխաներիս սիրտը... Մենք տիսրում ելինք, վոր անզոր ենք նրանց ողնել, կերակրել, ջերմացնել... նրանց տեղը, ճիշտ ե, խոտավետ եր, փափուկ, բայց վրաները բաց եր: Մտածեցինք՝ մի բանով ծածկել նրանց, բայց հայրս այն կարծիքը համանեց, վոր յեթե ծանր բան գրցենք՝ շունչները կկտրի, իսկ թեթե բանի տակից կարող են, դուրս գալ...

\*  
\*\*

Մի որ եր, — դա Շամոնի ձագերը կորցնելու յերկրորդ  
թերթարդորն եր — յերբ մենք զբաղված ելինք շնիկ-  
ներով, նկատեցինք, վոր Շամոն հեռվից՝ հետաքրքրված  
Ա. Ա. Մանուկյան  
Ա. Ա. Մանուկյան

3238 - ԵԿ



Նայում ե մեր կողմը. գուցե կարծում ե, թե իր ձագերի  
հետ ենք խաղում... բայց այդպես կարծել չեր կարող,  
վորովհետև շնիկները բաց լերևում ելին, վազատում ելին...  
Շամոն սակայն հետաքրքրված եր: — Գուցե ուզում եր  
տեսնել ինչ ենք անում. նա այնպես եր դիտում: Գուցե  
խղճում եր շնիկներին, վոր մնացել են անմայր, — չգի-  
տեմ... Փոքր անց, լերը շնիկներին թողած, անցել ելինք  
պարտեզ, նորից նկատեցինք, վոր Շամոն կրկին մոտեցել  
հետաքրքիր նայում ե շնիկների կողմը: — Իսկ նրանք՝  
այդ փոքրիկ կենդանիները դարձալ նվում ու վսպում ելին  
և կիսակույր աչքերով փնտռում իրենց մորը, նրա ստիճա-  
ները: Ու քանի գնում նրանց մնացած դառնում եր  
սրտամաշ ու տիսրությամբ լցնում ամբողջ բակը:

Շամոն գլուխը բարձր բոնած քայլ առ քայլ մոտե-  
նում եր, ուշադիր նայելով նրանց:

Մի ըստե մենք վախեցանք — չինի սա յել դոդանա  
շան ձագերին:

Բայց վոչ. Շամոն մոտեցավ ու մլավեց: Դա մի ձան  
եր, վոր արձակում եր նա իր ձագերին մոտենալիս:  
Գուցե թյուրիմացաբար սրանց ընդունել եր իր ձագերի  
տեղ: Դարձալ վոչ: — Նա շատ լավ եր լսում նրանց վըն-  
գոցը և չեր կարող պատճել, վոր Շամոն նրանց ձայնը  
շփոթեր իր ձագերի ձայնի հետ:

Տեսնելով կատուն մոտենում ե — մենք ել մոտեցանք  
նայելու, թե ինչ ե լինելու, ալսինքն ինչ ե անելու Շա-  
մոն: Զինի հանկարծ շնիկներին խեղդի, վասի...

Բայց մեր մոտեցումը նկատելով՝ Շամոն շուռ յեկավ  
ու, թավամաղ պոչը շարժելով, դանդաղ հեռացավ, կար-  
ծես ամոթահար. վոր իրեն բռնել ենք անհարմար տեղ,  
անհարմար ժամանակ...

Շամոլի վարմունքը տարորինակ եր, և մենք չհա-  
կացանք, թե ինչ եր ուզում նա և ինչու հեռացավ:

Քիչ հետո, լերը բարձրացանք պատշգամբ, — կատուն



Նորից յետ գարձավ և գնաց դեպի շնիկները. Նորից կանգնեց հեռու ու սկսեց դիտել նրանց:

Այնուհետև զրուցով տարված՝ մենք ել չկարողացանք հետեւ, թե ի՞նչ ե անելու Շամոն, բայց փոքր անց, յերբ յես պատշգամբից իջա պարտեզ գնալու, նկատեցի, վոր շնիկների ձայնը չի լսվում:

Այս հանգամանքը տարորինակ թվաց ինձ, և յես ակամա նայեցի նրանց կողմը:

Ու ի՞նչ տեսնեմ, — Շամոն պառկել ե շնիկների առաջ... և փոքրիկ կիսակույր կենդանիները նրա կըծքին ընկած՝ ծծում են նրա ստինքները...

Այժմ թե շնիկներն ելին հանգստացել, թե ինքը Շամոն:

\* \* \*

Ու այնուհետև յերբ շնիկները մեծացան — նրանք խաղում ելին Շամոնի հետ այնպես, ինչպես կիսակալին իրենց մոր հետ. հանաքով զզում ելին նրան, բարձրանում-նստում մեջքին, պոչը բռնում ու վազում յետեից: Իսկ յերբ բոլորովին մեծացան՝ յերկուսին տվինք գլուղացիների, մնաց մեկը, վորի անունը, մոր հիշատակը պահելու համար, գըինք Ալաբաշ:

Այդ նոր Ալաբաշը մի շատ ժիր շուն գարձավ: Ինչպես ամեն մի շուն, այնպես ել նա հալածում եր մեր բակն յեկող ամեն կատուի, բայց Շամոնին յերբեք: Մինչև վերջն ել նրանք մնացին բարեկամ. միասին խաղում ելին, միասին կերակրվում և միասին ել քնում պատշգամբում կամ պատշգամբի տակ...



ՀՅ.

Պատ. խմբագիր՝ նդ. Զովուրյան  
Տեխ. խմբագիր յեկ լիտոգրաֆիական  
Եկարից՝ Աերոք Գասպարյան  
Մրգագրից՝ Ա. Արզականյան

Դրամական լիազոր Կ—4532, Հրատարակ. 3958  
Պատվեր 279, տիրած 5000  
Պետհրատի տպարան, Յերևան, Ա Կունյանցի, 4



NL0398900

243

8557

ԳԻՒԸ 90 ԿՈՊ.

Մ

СТ. ЗОРЯН  
ШАМОН

Гиз. Арм. ССР, Ереван, 1937 թ.